

րին նպաստել են և մի քանի հանդամանքներ, ինքն ըստ ինքնան երկրաշրժը անպիսի ուժգնութեամբ է տեղի ունեցել, որ աւերել է գրեթէ ամբողջ քաղաքը, բայց որովհետեւ օրը հինգշաբթի լինելով՝ մասմեղական կանանց բաղանիք գնալու օրն էր, ուստի երկրաշրժը բացի շինքերը կործանելուց, տարել է և մարդկալին բաղմաթիւ զոհեր. մինչև ֆետրուարի կէսը թուրքերից արդէն մօտ 2000 դիակներ էին գտնուել, իսկ հակերից 27 և ինչպէս մել հաղորդեց Շամախու թեմի Հոգևոր Առենի Տ. Նախագահը, անշուշտ կրկնապատիկը պիտի լինի դահերի թիւը, որովհետեւ պեղումները տակաւին աւարտուած չեն:

Տների և բոլոր հաստատութիւնների մնձ մասը քանոդուած են, քաղաքն ամբողջապէս աւերուած, շրջակալ քանի մէ դիւղերի հետ և բոլոր բնակիչները անխափի մերկ և անպաշտպան հրապարակի վերալ մնացած:

Ինչպէս պէտք էր սպասել, Շամախու ալր ծանր աղէտը իւր վերալ դարձրեց Կովկասի քաղաքական վարչութեան և բոլոր աղջաբանակութեան ուշադրութիւնը. առաջին օրինակը տուալ Նորին Մեծութիւն Թագաւոր Կալսը, նուիրելով արկածեալների օգտին 150,000 բուբլի, Կավկասի Տ. Կառավարչապետի թուլտութեամբ ամենու բնք սկսաւ հանդանակութիւն և ժողովուրդը առանց աղջերի խորութեան իւր մարդաշախութեան ձեռը մեկնեց դէպի կարուեալները. Բագու քաղաքում կազմուած է մի մնձ կամիաէ, որի կողմից ներկալացուցիչներ են ուղարկուած Շամախի և շրջակալ դիւղերը՝ դըրամ, հաց, շոր և ալլ կենսական պիտօք բաժանելու:

Աղջիս Վեհ. Հալրապետան ևս իւր կողմից լանձնեց լիշեալ կօմիտէի անդամ և Բագուի գործակալ Տ. Արաէն վարդապետին 2000 ռուբլի արկածեւլ աշխարհականներին և 1,000 բուբլի հողեռականներին բաժանելու համար:

### ՆԵՐՍԻՍ ԹԱՑԻՐԵԱՆԻ ԿՏԱԿԻ

Անցեալները Թիֆլսում վախճանուեց երեանցի Ն. Թալիբեանցը, որ իւր կարողութեան մնձագոյն մասը, մօտ հարիւր լիսուն հաղար բուբլի, կտակել է Երեանի հալոց թեմական դպրոցին. Արդպիսով Երեանի դպրանոցը, որ ինչպէս

լաւոնի է, մինչև ալժմ կառավարում էր մեծ մասամբ թե-  
մակալ առաջնորդների և հոգաբարձութեանց մեծ նեղութիւն-  
ներով ձեռք բերած միջոցներով, ալժմ զրեթէ բոլորովին ա-  
պահովում է և կարող է թէ ընդարձակուել և թէ կանոնա-  
ւոր դպրանոցների շարքն անցնել: Պատիւ և լաւիտենական  
հանդիսատ հանգուցեալին. երանի թէ ամեն մարդ զեթ մեռ-  
նելիս չմոռանար իւր ծննդավարը. և լիչէր մերձաւորների  
կարօտ վիճակը:

Երեանի թեմական դպրոցի կառավարութիւնն ապահո-  
վուեց. մի բաւական մեծ հոգսից աղատուեց դպրոցի եռանդուն  
նախադահ սրբ. Սուքիսա արքեպիսկոպոսը: Յանկանք որ  
դպրոցի ուսումնական վիճակն էլ բարդաւաճէ նիւթական ա-  
պահովութիւնն համեմատ:

Հաստատ աղբիւրից կարող ենք հաղորդել, որ Նորին  
Բարձր Սրբազնութեան գլխաւոր հոգսերից մէկն ալն է ներ.  
կալումս, որ կարողանաւ դպրանոցը առաջնորդանիստ նկեղե-  
ցոց տեղափոխսել քաղաքի կենտրոն եկեղեցիներից մէկը և  
այնտեղ նորա համար մի հոգակապ շէնք կատուցանել,

Յանկանում ենք կատարեալ լաջողութիւն:

### ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈՒ ԵՆՆԴԵԱՆ ՀԱՐԻԿՐԱՄԵԱԿԸ

Փեարուարի 13-ին ամբողջ Ֆրանսիան մի շունչ ու մի  
հոգի դարձած ողեռութեամբ տօնում է իւր ամենամեծ զա-  
ւակներից մէկի ծննդեան հարիւրամեակը: Հալրենիքի ամե-  
նամեծ զաւակն այս անդամ ոչ պատերազմների լաղթանակ-  
ներ տանող հանճարեղ զօրավար է, ոչ աշխարհի անխւը  
պտաեցնող մեծ քաղաքագէտ, ալլ իւր տաղանդաւոր մտքի  
արտալալտութիւններով զավիճներ վաստակած բանաստեղծ,  
Ֆրանսիաի ամեն ամեն բանաստեղծը: Վիկտօր Հիւգօն այն  
սակաւաթիւ քանքարաւոր մարդկանցից մէկն է, որ իւր գըր-  
չի շարժումների արդիւնքով զրաւել է ոչ միայն իւր հայրե-  
նակիցների զգացմունքներն ու սրտերը, ալլ և ամբողջ քա-  
ղաքակիրթ աշխարհի համակրանքն ու սէրբ: Հիւգօն Ֆրան-  
սիալի պարծանքն է և նորա ամենախոշոր հիմնաքարերից մէ-  
կը: Ինչպէս որ Հիւգօն ինքը ոգեորշում էր ֆրանսիացիներով,  
այնպէս էլ ամեն մի ֆրանսիացի, հասարակապետութեան նա-